Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Սիրելի ժողովուրդ հայոց,

Հայրապետական սիրով Մեր օրհնությունն ենք բերում ամենքիդ՝ ի Հայաստան, Արցախ և ի Սփյուռս, և շնորհավորում Հանրապետության տոնի առիթով։

1918 թվականին մայիսյան փառապանծ հերոսամարտերի հաղթանակով հռչակվեց Հայաստանի առաջին Հանրապետությունը՝ որպես իրականացում մեր ժողովրդի ազատության ու անկախության դարավոր իղձերի։

Քաջարի պայքարով, անընկճելի հավատով ու միասնական ընթացքով վերահաստատած իր անկախ պետականությունը՝ ազգս հայոց ջանում է ստեղծագործ կյանքով և նոր իրագործումներով շենացնել այսօր երկիր Հայրենին։

Աղոթք ենք բարձրացնում առ Աստված, որ խաղաղություն շնորհի համայն աշխարհին և պարգևի եռանդ ու զորություն աշխարհասփյուռ մեր ժողովրդին՝ հայրենանվիրումով ու եկեղեցասիրությամբ ուժերը ներդնելու հանուն ազգային մեր իղձերի, մեր ժողովրդի միացյալ կյանքի ու պայծառ գալիքի։

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
27 մայիսի 2006 թ.